ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 1111-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2014.10.22/56(1069) Հոդ.939	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	18.09.2014
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	16.10.2014
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.11.2014	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ, ՀՐԱԶԴԱՆԻ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍԱԿԱՎԱԶՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱՇՏԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2014 թվականի N 1111-Ն

ԱՐԱՐԱՏՅԱՆ, ՀՐԱԶԴԱՆԻ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍԱԿԱՎԱՋՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԱՇՏԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 92-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում սակավաջրություն:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված տարածքներում գոյություն ունեցող ջրօգտագործողների ջրօգտագործման թույլտվություններում կատարել ջրօգտագործման ծավալների և (կամ) ռեժիմների կրճատման սահմանափակումներ և չափավորումներ՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունների դրույթների համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր Արարատյան դաշտի ջրօգտագործում իրականացնող ձկնաբուծական տնտեսություններում կիսափակ ջրամատակարարման համակարգի պիլոտային ծրագրերի ներդրման ուղղությամբ և արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

4. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում, օդերևութաբանական վերլուծության արդյունքում, երաշտի նախապայմանների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

5. Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ավազանային կառավարման տարածքներում սահմանված սակավաջրությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է վերացվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հ. Աբրահամյան

2014 թ. հոկտեմբերի 16
Երևան